«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
2 փետրվարի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 փետրվարի 2002 թվականի N 88
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված է
ՀՀ կառավարության 2002 թվականի
փետրվարի 2-ի N 88 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների (այսուհետև՝ շենքեր և շինություններ) կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը:

2. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոփոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:

3. Համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) պատվիրատուին՝ նրա կողմից ներկայացված հայտի հիման վրա, սահմանված կարգով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության և (կամ) քանդման թույլտվություն) տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

4. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոփոխելու հետ կապված աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները բավարարող, սահմանված կարգով մշակված, համաձայնեցված ու հաստատված նախագծով:

5. Հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա համապատասխան համայնքի ղեկավարի կողմից պատվիրատուին սահմանված կարգով տրվում է շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոփոխելու հետ կապված աշխատանքներն իրականացնելու թույլտվություն:

6. Շենքերն ու շինությունները փոփոխելու հետ կապված շինարարական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը, շինարարության ավարտական ակտի ձևակերպումն ու գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Ոչ բնակելի տարածքները՝ բնակարանների և բնակարանները ոչ բնակելի տարածքների փոփոխելու դեպքում համապատասխան պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման հիման վրա համապատասխանաբար ընդգրկվում են բնակարանային ֆոնդում կամ հանվում են նշված ֆոնդից:

8. Պետական սեփականություն հանդիսացող հանրակրթական, ուսումնական, կոմունալ տնտեսության, ինժեներական ենթակառուցվածքների, պատմամշակութային օբյեկտների գործառական նշանակությունը փոփոխվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների մասնագիտական եզրակացության հիման վրա:

Սույն կետում նշված եզրակացությունների ստացումն ապահովում է համապատասխան մարզպետը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը):

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**